



Կարգապահական գործ թիվ 18141

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի հունիսի 11-ի թիվ 129-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/82-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԻՐՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝
Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ
Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի,
Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով,
քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,
քննության առնելով փաստաբան Ալեքսանդր Սիրունյանի (արտոնագիր՝ թիվ 8),
(**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու
վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

09.10.2018թ. Պալատ է մուտքագրվել (**մուտք՝ 09.10.2018թ. N 2904-18**) Արմենուիի
Բարխոյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**), որում հայտնվել է, որ Ալեքսանդր Սիրունյանն իր
ֆեյսբուքյան էջում կատարել է հայհոյախառն գրառում, որով նսեմացնում է ամբողջ
իրավապահ համակարգը: Նա, լինելով իրավաբան, իրեն պահել է փողոցային,
իրավագիտակցության ցածր մակարդակ ունեցող անձի պես:

Դիմողը խնդրում է Պալատին իր իրավասության սահմաններում իրավական
գնահատական տալ և պատժել Ալեքսանդր Սիրունյանին:

Դիմումին կից ներկայացվել է Պատասխանողի՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում
արված գրառման սքրինշոթը՝ հետևյալ բովանդակությամբ. «Այսօր ենք պարզել: Էն, որ
Կենտրոնի դատախազության նախաձեռնությամբ իմ ու Адвокат Карен Кираквсян-ի
նկատմամբ ապօրինի քրեական գործ էին քննում, էդ հլը ոչինչ: Գործը կարճվել է, իսկ
մեղավոր իրավապահին իրա տան մեջ եմ շինելու՝ իրա կնգա առաջ, անկախ նրանից քննիչ
ա, թե դատախազ: Դու մի ասա, էդ պուտանկեքը, հեսա պարզում ենք ով, դաժե անձնագիր
ստանալու ու փոխելու վրա էին արգելանք դրել:

Բռնվեք, բոզեր, ու բժշկական թղթեր հավաքեք:»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 08.11.2018թ. թիվ 386-Ա/ԿԳ-18141 որոշմամբ փաստաբան Ալեքսանդր Սիրունյանի, նկատմամբ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

12.11.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողից պահանջվել է բացատրություն:

03.12.2018թ. Պալատ է մուտքագրվել Դիմողի բացատրությունը, որում հայտնվել է հետևյալը:

«ՀՀ-ում Դիմողի ծանուցման հասցեն հանդիսանում է Կոտայքի մարզ, Գետարգել համայնք, Ս. Ալեքսանյան փ. 9.1 տուն: Դիմողի փոստային առաքումները ստանում է իր հարսը՝ Ռուզաննա Միրաքյանը՝ համապատասխան լիազորագրով, քանի որ Դիմողը բնակվում է ՌԴ-ում: Վերոնշյալ գրավոր բացատրությունը Դիմողն իր բարեկամի միջոցով ուղարկել է ՀՀ, որպեսզի ներկայացվի Նախապատրաստողին, իսկ Դիմողը ՀՀ-ում կլինի 15.12.2018թ.:

Դիմողն ավարտել է հայկական դպրոց և ամբողջությամբ տիրապետում է թե՛ բանավոր, թե՛ գրավոր հայոց լեզվին: Վերոնշյալ կարգապահական կարգապահական գործի համար հիմք հանդիսացող գրառումը կատարվել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում որպես ընդհանուր հրապարակում, որը բաց է դիտման յուրաքանչյուր օգտատիրոջ համար, և այդտեղ որևից անձնական նամակագրության հրապարակման կետ չկա:

Այդ գրառման մեջ օգտագործվել են այնպիսի հայիոյանքներ, որոնք ոչ միայն վերաբերում են իրավապահ համակարգին, այլ նաև գործի կողմերին՝ հանձինս Դիմողի:

Բացի այդ, փաստաբանը ոչ մի իրավունք չունի նսեմացնել իրավապահ մի ամբողջ համակարգ, և Դիմողը որպես հայ կին դա համարում է անթույլատրելի արարք և գտնում է, որ պետք է տրվի համապատասխան արձագանք: Պատասխանողի կողմից կատարվել են նաև այլ հրապարակային գրառումներ, որոնցից 4-ը Դիմողի կողմից կցվել է իր բացատրությանը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

25.10.2018թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանողի բացատրությունը, որում հայտնվել է հետևյալը:

Պատասխանողը նշել է, որ լավ չի պատկերացնում խնդիրը և դրա հետ կապված մի շարք հանգամանքներ: Մասնավորապես՝

1) ինքը չգիտի, թե դիմումում նշված քաղաքացին ով է, սակայն լավ գիտի, որ իր իմացած նույն անունով տիկինը ոչ թե Կոտայքի մարզի բնակիչ է, այլ՝ Մոսկվա քաղաքի: Բոլոր տեղերում հանդես է գալիս որպես Մոսկվա քաղաքի փաստաբան:

2) իր իմացած քաղաքացին հայերեն չգիտի, ուստի՝ խնդրում է դիմումը քննարկելուց առաջ նրան հրավիրել Պալատ, որպեսզի նույն տեքստը գրի իր ձեռքով, այդպիսով նաև հնարավոր կլինի պարզել դիմումի հեղինակի ինքնությունը, քանի որ փաստաբանի վերաբերյալ դիմումը չի կարող լինել անանուն:

3) Եթե նույնիսկ հիշյալ քաղաքացին այն անձն է, ով Մոսկվա քաղաքի բնակիչ է, և ում սուտ մատնության հիման վրա Ալեքսանդր Սիրունյանի և Կարեն Կիրակոսյանի նկատմամբ ապօրինի քրեական գործ էր հարուցվել, ապա Սիրունյանը լավ չի պատկերացնում, թե դիմումին կից ներկայացված տեքստի ո՞ր հատվածից է Դիմողն անձամբ վիրավորվել, հիշյալ տեքստի ո՞ր հատվածը կամ կոնկրետ ու՞մ համար է առհասարակ վիրավորական, ի՞նչ կապ ունի փաստաբան Ալեքսանդր Սիրունյանն իրավապահ համակարգի հետ, և ի՞նչ կապ ունի այդ տիկինն ամբողջ իրավապահ համակարգի համար հոգ տանելու հետ, ուղարկված տեքստը ե՞րբ, ո՞ր թվականին, որտե՞ղ, ո՞ր կայքում, ո՞ր սոցիալական ցանցում է գրվել, հրապարակային է, թե՞ ոչ, եթե հրապարակային չէ, ապա Դիմողն ինչ գործ ունի ոչ հրապարակային նյութը կարդալու և ինչ-որ մեկի անձնական գրառումների մասին Պալատին պատմելու հետ, ի՞նչ կապ ունի ներկայացված տեքստն Ալեքսանդր Սիրունյանի հետ:

Ալեքսանդր Սիրունյանը գտնում է, որ նշված դիմումով իր՝ որպես փաստաբանի նկատմամբ արվել են հրապարակային վիրավորական արտահայտություններ, որոնք անխուսափելիորեն առաջացնելու են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում 29.11.2018թ. Պալատին հասցեագրվել է Պատասխանողի դիմումը, որի համաձայն՝ Պատասխանողը խնդրում է հիմք ընդունել իր 23.10.2018թ. առաքված բացատրությունը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 17.12.2018թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն՝ հաստատված են համարվել հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնական քննչական բաժնի ավագ քննիչ Ժ.Կ. Մովսիսյանի կողմից 31.08.2018թ. կայացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չհիրականացնելու, ընտրված խափանման միջոցը վերացնելու, գույքը կալանքից ազատելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշում, որով որպես մեղադրյալ ներգրավված են եղել փաստաբաններ Ալեքսանդր Սիրունյանը և Կարեն Կիրակոսյանը:

2. «Александр Сирунян» անվամբ օգտատիրոջ կողմից 19.09.2018թ.՝ ժամը 0:37-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում կատարված գրառման արտատպված օրինակում

(սքրինշոթ) թույլ են տրվել մի շարք հրապարակային արտահայտություններ, որոնց հիման վրա այդ ժամանակահատվածում ՌԴ-ում բնակվող ՀՀ, Կոտայքի մարզի Գետրագել համայնքի, Ս. Ալեքսանյան փ. 9, 1 տան բնակչուհի Արմենուհի Բարխոյանը փաստաբան Ալեքսանդր Սիրունյանին վերագրել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի միջոցով հրապարակային ձևով հայհոյախառն գրառում կատարելու վարքագիծ, մասնավորապես. «... մեղավոր իրավապահին իրա տան մեջ եմ շինելու իրա կնգա առաջ...», « էդ պուտանկեքը...», « բոզեր...»:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ 25.12.2018թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանողի առարկությունը, որում հայտնվել է հետևյալը:

Վիճելի է, որ «Александр Сирунян» անվամբ օգտատիրոջ կողմից քննարկման առարկա գրառումը կատարվել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում: Վիճելի է, որ հիշյալ գրառումը հրապարակային է: Վիճելի է, որ կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած քաղաքացու դիմումը գրել է ինքը: Վիճելի է, որ քննարկման առարկա արտահայտությունները հայհոյանք են պարունակում: Վիճելի հանգամանքներ էլի կան, որոնք, սակայն, կներկայացվեն գործի քննության ժամանակ:

27.12. 2018թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանողի գրությունը, որում հայտնվել է հետևյալը:

Պատասխանողը պնդում է իր նախորդ բացատրությունը և հայտնում է, որ իր կողմից արված արտահայտությունները վիրավորական բնույթ չունեն և որպես ապացույց ներկայացնում է այդ արտահայտությունների լեզվաբանական իմաստները: Բացի այդ, Պատասխանողը վիճարկում է դիմումին կից ներկայացված փաստաթղթերի՝ թույլատրելի ապացույց լինելն այն հիմքով, որ եթե խնդրո առարկա բառերը գրվել են «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, ապա դրանք կարող են թույլատրելի լինել, եթե գննվել են Պալատի խորհրդի կողմից կամ վավերացվել են նոտարական կարգով, ինչպես նաև հարցադրում է անում հետևյալի վերաբերյալ. Դիմողն անձամբ է տեսել քննարկվող հրապարակումը, թե նրան նշված փաստաթղթերն ինչ-որ մեկը ցույց է տվել, որքանով է ԱՄՆ-ի սոցիալական ցանցում կատարված գրառումը հրապարակային և որքանով կապ ունի Հայաստանում իբր կատարված կարգապահական խախտման հետ, և այս համատեքստում պետք է գնահատական տալ՝ Ա. Սիրունյանի կողմից իբր կատարված կարգապահական իրավախախտումը երբ է սկսվել և որտեղ է ավարտվել, եթե քննարկվող գրառումն իրոք կատարվել էր, ապա ո՞ր սոցիալական ցանցում, քանի որ գործում առկա ապացույցներից դա հասկանալի չէ, որքանով է ապացուցողական ու գնահատական ենթակա օտարալեզու բառեր պարունակող փաստաթուղթը, ե՞րբ է կատարվել հիշյալ գրառումը, ինչը ևս հասկանալի չէ, ի՞նչ կապ ունի փաստաբան Ալեքսանդր Սիրունյանն այդ ամենի հետ, մասնավորապես, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում որոնման արդյունքներով առկա են թվով 3-ական պրոֆիլներ՝ «Александр Сирунян» և «Алик Сирунян» անուններով:

Ըստ Պատասխանողի՝ նշված հանգամանքները պետք է ապացուցի Դիմողը, իսկ Պալատի խորհուրդը պետք է ղեկավարվի թույլատրելի ապացույցներով, այլ ոչ թե ենթադրություններով: Պատասխանողը նաև նշում է, որ իր գրությանը կցել է Ոստիկանությունում Դիմողի կողմից կատարված ստորագրության օրինակը, որից ակնհայտ է, որ Պապատ ուղարկված դիմումը Դիմողն ինքը չի ստորագրել, այսինքն՝ բացակայում է

կարգապահական գործի հարուցման առիթը: Ավելին՝ ըստ Պատասխանողի՝ նույնը չէ Դիմողի հասցեն. Պատասխանողի իմացած անձը ՌԴ-ի բնակիչ է, իսկ Դիմողը՝ Կոտայքի մարզի բնակիչ, լիազորողը՝ Երևան քաղաքի բնակիչ: Պատասխանողի կարծիքով, դիմող կողմից միակ պարզված սուբյեկտը պարոն Ջորջեսն է, սակայն հայտնի չէ, թե նա ում է ներկայացնում, ինչպես նաև նրան տրված լիազորագրից բացարձակ չի բխում, որ պարոն Ջորջեսը լիազորված է հանդես գալ նաև Պալատում:

Պատասխանողը գտնում է, որ կարգապահական վարույթը պետք է կարճել, հայտնում է, որ Պալատի խորհրդի անդամների նկատմամբ բացարկի միջնորդություններ չունի, ինչպես նաև խնդրում է կարգապահական գործի քննությունն անցկացնել իր բացակայությամբ:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 17.12.2018թ., Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 20.02.2019թ. ժամը 19:00-ին, 27.03.2019թ. ժամը 19:15-ին, 10.04.2019թ. ժամը 19:00-ին, 11.06.2019թ. ժամը 18:15-ին ՀՀ փաստաբանների Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- «Александр Сирунян» անունից 19.09.2018թ.՝ ժամը 0:37-ին, գրվել են հետևյալ արտահայտությունները. «Այսօր ենք պարզել: Էն, որ Կենտրոնի դատախազության նախաձեռնությամբ իմ ու Адвокат Карен Кираквсян-ի նկատմամբ ապօրինի քրեական գործ էին քննում, էդ հլը ոչինչ: Գործը կարճվել է, իսկ մեղավոր իրավապահին իրա տան մեջ եմ շինելու՝ իրա կնգա առաջ, անկախ նրանից քննիչ ա, թե դատախազ: Դու մի ասա, էդ պուտանկեքը, հեսա պարզում ենք ով, դաժե անձնագիր ստանալու ու փոխելու վրա էին արգելանք դրել:

Բռնվեք, բոզեր, ու բժշկական թղթեր հավաքեք:»:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, «Александр Сирунян» անունից կատարված գրառման տպված օրինակով:

6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 11.06.2019թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Ալեքսանդր Սիրունյանը փաստաբան է հանդիսանում 16.10.2009թ., և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս

նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ընթացիկ վարույթ)՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, լսելով Դիմողի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Սիրունյանի նկատմամբ Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի փակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մարչելիություն):

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կարգի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտկանությունը կրող կողմը:

Տվյալ դեպքում Դիմողն իր դիմումում Պատասխանողին էր վերագրել ենթադրաբար «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում որոշակի ոչ ցենզուրային արտահայտությունների կատարում՝ որպես ապացույց դիմումին կցելով ենթադրաբար «Ֆեյսբուք» սոցիալական ցանցից ենթադրաբար Պատասխանողին պատկանող տպված էջը: Տպված էջից երևում է, որ տվյալ ենթադրյալ ֆեյսբուքյան էջը պատկանում է «Александр Сирунян» անվամբ անձի: Մինևույն ժամանակ Դիմողի կողմից որևէ կերպ չի հիմնավորվել, որ այդ էջն իրականում գոյություն է ունեցել և իրականում պատկանում է հենց Պատասխանողին: Պատասխանողի և ներկայացված տպված էջում տեղ գտած ենթադրյալ օգտատիրոջ անունների համընկնումը բավարար չէ պնդելու համար, որ հենց Պատասխանողն է կատարել իրեն վերագրվող

հայիոյախառն գրառումը: Հարկ է նկատել, որ Խորհուրդը կարգապահական գործի քննության ժամանակ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում կատարել է որոնում և «Александр Сирунян» անվամբ օգտատեր չի գտնվել: Նշվածի վերաբերյալ Դիմողի ներկայացուցիչը հայտնել է, որ այդ էջը հավանաբար ջնջվել է:

Խորհուրդն արձանագրում է, որ նույնիսկ նշված գրառման՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում կատարված լինելու փաստի հաստատումը բավարար չէ հաստատված համարելու այդ գրառումը Պատասխանողի կողմից կատարված լինելու փաստը, քանի որ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում որևէ սահմանափակում չկա միևնույն անուն-ազգանուններով օգտատերերի էջեր բացելու համար, որպիսի պայմաններում Դիմողը պետք է Պալատին ներկայացներ որոշակի, թույլատրելի և վերաբերելի ապացույցներ առ այն, որ Պատասխանողն է իրականում կատարել իրեն վերագրվող ենթադրյալ ֆեյսբուքյան գրառումը: Նման որևէ ապացույց Դիմողը չի ներկայացրել:

Խորհուրդը գտնում է, որ նման դեպքերում պետք է ներկայացվեն այնպիսի ապիացույցներ, որոնցով հնարավոր կլինի պարզել սքրինշոթի և դրանում տպված գրառման իսկությունը:

ՀՀ վերաքննիչ դատարանը թիվ ԵԱՆԴ/1383/02/16 գործով 16.11.2017թ. կայացված որոշմամբ անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի օգտատիրոջ կատարած գրառումը պարունակող պատկերի պատճենը համակարգչի էկրանից տպելով հանելու միջոցով ստացված գրավոր ապացույցը (փաստաթուղթը կամ նյութը) զրպարտությունը հիմնավորող ապացույց է և ո՞ր դեպքում ու ի՞նչ ձևով այն կարող է համարվել զրպարտություն համարվող փաստացի տվյալները հաստատող պատշաճ ապացույց, արձանագրել է, որ *Դատարանը, իրավաչափ կերպով մեջբերելով սքրինշոթերը որպես ապացույց դատարանում օգտագործելու վերաբերյալ այլ երկրների իրավական պրակտիկայի փորձը, գտել է, որ դրանք կարող են համարվել պատշաճ ապացույցներ, եթե դրանց իսկությունը հաստատված է նույնիսկ կողմից կամ եթե իսկությունը հնարավոր է ստուգել լրացուցիչ տվյալներով, այն է՝ 1.կայքէջից պատկերի պատճենը համակարգչի էկրանից տպելով հանելու միջոցով ստացվելուց և թղթային կրիչի վրա փոխանցվելուց հետո այդ փաստաթղթի վրա դրված է ինտերնետի տվյալ կայքէջից այն ստանալու ամսաթիվն ու ժամը, 2.դրա վրա առկա են տեղեկություններ այն անձի մասին, ով համակարգչի էկրանի վրա է տեղափոխել համապատասխան կայքէջի պատկերը, այնուհետև իրականացրել է արտատպումը՝ տեղեկությունը փոխանցելով թղթային կրիչի վրա, դա կարող է հաստատվել վերջինիս ստորագրությամբ, 3.առկա են տեղեկություններ այն համակարգչի մասին, որտեղից և որի միջոցով կատարվել է արտատպումը, 4.առկա են տեղեկություններ, թե ինչ համակարգչային տեխնոլոգիայի (ծրագրի) կիրառմամբ է դա ստացվել (եթե այդպիսին կիրառվել է) և այլն:*

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ *Դատարանը զուտ վկայակոչել է որոշ երկրների իրավական պրակտիկայի փորձը՝ սքրինշոթերը որպես ապացույց դատարանում օգտագործելու և դրանց իսկությունը ստուգելու վերաբերյալ ու նկատի ունենալով, որ ՀՀ*

օրենսդրությամբ հստակ կարգավորում չկա ինտերնետի տեղեկատվությունն ամրագրելու կոնկրետ ձևի և կարգի ու այն որպես ապացույց օգտագործելու մասին գտել է, որ գործող «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ կետով սահմանված է, որ նոտարն, ի թիվս այլ նոտարական գործողությունների, վավերացնում է փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկությունը, ինչպես նաև ապահովում է ապացույցները: Այսինքն, նոտարը կարող է վավերացնել սրբինշոթները, եթե դրանք պարունակում են որոշակի և կոնկրետ տվյալներ, որոնց միջոցով հնարավոր է ստուգել դրանց իսկությունը և համոզվել, որ էկրանի տվյալ պատկերն իրոք եղել է տվյալ կայքէջում և ինտերնետ կապի միջոցով ստացել է տարածում: Ուստի, եթե կա հավանականություն, որ նշված ապացույցը հետագայում ներկայացնելը կարող է անհնարին դառնալ կամ դժվարանալ, ապա շահագրգիռ կողմն իրավունք ունի այն նոտարի հաստատմանը ներկայացնել: Միաժամանակ Դատարանն արձանագրել է ավտերնատիվ պարբերակ սրբինշոթերը որպես ապացույց դատարանում օգտագործելու և դրանց իսկությունը ստուգելու վերաբերյալ՝ սահմանելով, որ 1. կայքէջից պատկերի պատճենը համակարգչի էկրանից տպելով հանելու միջոցով ստացվելուց և թղթային կրիչի վրա փոխանցվելուց հետո այդ փաստաթղթի վրա դրված է ինտերնետի տվյալ կայքէջից այն ստանալու ամսաթիվն ու ժամը, 2. դրա վրա առկա են տեղեկություններ այն անձի մասին, ով համակարգչի էկրանի վրա է տեղափոխել համապատասխան կայքէջի պատկերը, այնուհետև իրականացրել է արտատպումը՝ տեղեկությունը փոխանցելով թղթային կրիչի վրա, դա կարող է հաստատվել վերջինիս ստորագրությամբ, 3. առկա են տեղեկություններ այն համակարգչի մասին, որտեղից և որի միջոցով կատարվել է արտատպումը, 4. առկա են տեղեկություններ, թե ինչ համակարգչային տեխնոլոգիայի (ծրագրի) կիրառմամբ է դա ստացվել (եթե այդպիսին կիրառվել է) և այլն: Նման ոչ սպառիչ ցանկի սահմանելով՝ Դատարանը փաստել է, որ սրբինշոթերի իսկությունը ստուգելու նպատակով կարող է ընդունվել ցանկացած փաստ, տեղեկություն, տվյալ, որոնց համակցությունը բավարարության տեսանկյունից կարող է ստեղծել համոզմունք հաստատված համարելու այն փաստը, որ համակարգչի էկրանից կատարված արտատպումն իրոք տվյալ ինտերնետային կայքէջից է կատարվել, և դրա հեղինակը եղել է այդ կայքէջի կոնկրետ օգտատերը:

Վերոնշյալի հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից կարգապահական խախտման կատարման մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ չի ապացուցվել, որ Պատասխանող Ալեքսանդր Սիրունյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում կատարել է Դիմող Արմենուհի Բարխոյանի դիմումում վկայակոչված

արտահայտությունները, հետևաբար, Պատասխանող Ալեքսանդր Սիրունյանի վարքագծում Օրենքի և (կամ) Կանոնագրքի խախտումը բացակայում է:

Ո Ր Ո Շ Ե Ց'

1. Փաստաբան Ալեքսանդր Սիրունյանի (արտոնագիր թիվ 8) նկատմամբ Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-18141 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Մեժլումյան

**11 հունիսի 2019թ.
թիվ ԿԳ/82-Ա
ք. Երևան**